

---

**ՄԱՏՅԱՆՈՒՄ ԲԵԿԱՐՄԱՏՈՎ ԲԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**ՀՐԱՉԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

Չեմ ցանկանում անդրադառնալ լեզվի մեջ բառի տեղի, դերի ու նշանակության հարցերին, քանզի դրանք լեզվաբանների խնդիրներն են, և այդ ուղղությամբ զգալի գործ է արված, թեև քիչ չեն նաև անելիքները: Համենայն դեպս հանրագիտարանային ճշմարտություն է, որ բառը, «որպես լեզվի նվազագույն հիմնական» միավոր, «իր հնչյունական կազմով արտահայտում է հասկացություն առարկայի, գործողության, իրականության երևույթների, նրանց կառուցվածքի կամ փոխհարաբերությունների մասին»<sup>1</sup>: Ըստ հեղինակի՝ բառի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ արտահայտում է իմաստ, այսինքն՝ հանդես է գալիս որպես իմաստակիր միավոր<sup>2</sup>: Ավելին, պարզվում է, որ բառը «որպես լեզվային հիմնական նշան և դրա տեքստային (խոսքային) բովանդակության մեջ որպես անուն հանդես» գալու շնորհիվ կարող է դառնալ «**տեքստ կամ տեքստային հատված**»<sup>3</sup> (այս և հետագա ընդգծ. իմն են - Հ. Մ.): Եթե բառի ամենակարևոր առանձնահատկությունը իմաստ արտահայտելն է, և այն կարող է դիտվել «տեքստ կամ տեքստային հատված», ապա այստեղից հետևում է, որ ցանկացած տեքստ ընթերցելու առաջնահերթ խնդիրներից մեկը դառնում է տվյալ տեքստի բառերն ու դրանց արտահայտած բառիմաստները ճիշտ հասկանալն ու բացահայտելը: Ըստ այսմ՝ իրավամբ հարց է ծագում. արդյոք մենք մի շտ ենք ճիշտ կամ թեկուզ ճշմարտամոտ հասկանում մեր կարդացած տեքստի բառերը: Հարց, որն անչափ կարևոր է հատկապես որևէ տեքստ մեկ լեզվից մեկ այլ լեզվի թարգմանելիս: Մինչդեռ միանշանակ կարող ենք ասել, որ երբեմն նույն տեքստի նույն բառը տարբեր թարգմանիչներ հասկանում ու թարգմանում են տրամագծորեն հակադիր իմաստներով: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք տեսնել Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գլուխգործոց ստեղծագործության աշխարհաբար (ոչ միայն) թարգմանություն-մեկնաբանություններում:

Ավելորդ մանրամասնություններից խուսափելու համար հարկ էմ

---

<sup>1</sup> **Ա. Աբրահամյան**, Բառ, ՀՄՀ, հ. 2, Եր., 1976, էջ 297:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 298:

<sup>3</sup> **Թադևոս Տոնոյան**, Հայերենի տեքստը և լեզվամտածողական արժեհամակարգը, Ստեփանակերտ, 2016, էջ 388:

համարում բերել միայն մեկ օրինակ. Մատյանի քննական բնագրի 20-րդ գլխի 49-րդ տողում կարդում ենք. «Չակատեցայ անկասելի ի պատկանելեացն գործոց»<sup>4</sup>:

Ասվածը ճիշտ հասկանալու համար շատ կարևոր են «զակատեցայ» և «պատկանելեացն» բառերը: Դրանցից առաջինը Հայկազյան լեզվի նոր բառգրքում բացատրված է. «Մոլեզնաբար զականել. աչս արձակել, յառիլ եւ յարիլ. չարաչար զհետ պնդիլ իրաց ինչ՝ խորշելով ի միւսմէն. իսենդի պէս բանի մը ետելէ իյնալ»: Ինչ վերաբերում է երկրորդին, ապա այն, լինելով տարիմաստ, կարող է հասկացվել և՛ «Արժանի պատկառանաց. ակնածելի», և՛ «Ամօթալի»: Այժմ տեսնենք, թե ո՞վ ինչպէս է թարգմանել ինդրո առարկա տողը.

**Մ. Գոչունյան**՝ ամօթալի գործերու յարեցայ բուռն տենչով,  
առանց կարող ըլլալու ետ կենալ անոնցմէ,

**Թ. Գուշակյան**՝ պատկառելի գործերէն շարունակ խոտորեցայ,

**Գ. Տրապիզունի**՝ Խենդի մը պէս սիրահարուեցայ միշտ ամօթալի  
եւ գարշ գործերու,

**Մ. Խերանյան**՝ Մոլի դարձա անկասելի կերպով ամօթալի  
գործերի մեջ,

**Վ. Գևորգյան**՝ Խենթի մոլությամբ սիրահարվեցի// Ամօթալի ու  
զազիր գործերին,

**Ռուսերէն տողացի**՝ Пристрастился я, не отступая, к делам  
постыдным:

Կարծում եմ՝ դժվար չէ տեսնել, որ գործ ունենք երկու հակադիր, ասել է թե՛ փոխբացառող իմաստների հետ, որոնցից Թ. Գուշակյանի թարգմանությամբ հասկացվում է, որ բանաստեղծն իբր խոտորվել, շեղվել է պատկառելի, այսինքն՝ պատկառագողու, ակնածելի գործերից և այն էլ՝ շարունակ, իսկ մյուսների համաձայն (չհաշված նրբերանգային տարբերությունները)՝ իբր անկասելի մոլությամբ սիրահարվել է ամօթալի, գարշելի, անգամ իսկ զազիր գործերի: Փաստորեն, բառիմաստի տարբերումներից տարբեր է ստացվել նաև տվյալ բառի ցույց տված գործողության ուղղությունը. Թ. Գուշակյանի թարգմանությամբ ունենք բացառական հոլովով դրված անջատման անուղղակի խնդիր, իսկ մյուսների թարգմանությամբ՝ տրական հոլովով դրված հանգման անուղղակի խնդիր ցույց տվող գործողություն: Հարկ է նկատի ունենալ, որ տեքստի (խոսքի) տեսաբանների կարծիքով՝ «Տեքստի ոչ միայն հարևան, կից, այլև ցանկացած հատված տրամաբանական կապի մեջ է այդ տեքստի ցանկացած այլ, ուրիշ հատվածի հետ: Հնարավոր է, որ այդ կապն անուղղակիորեն չզգացվի, սակայն այն անպայմանորեն, թեկուզև գաղտնի գործում է: Տեքստի ցանկացած հատված տեղավոր-

<sup>4</sup> Մատյանի բնագրից մեջբերումները կատարում ենք միայն քննական հրատարակությունից՝ **Գրիգոր Նարեկացի**, Մատենանոց տպարանի տպագրության, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985:

վում է ողջ տեքստի տրամաբանության համակարգում»<sup>5</sup>: Հաշվի առնելով հենց այս հանգամանքը՝ չեմ ցանկանում անդրադառնալ վերը բերված թարգմանությունների ճիշտ կամ սխալ լինելու խնդրին, քանզի Մատյանի ամբողջ բովանդակության մանրագին քննությունը չի բացառում նաև թե՛ մեկի և թե՛ մյուսի սխալ լինելը: Ասվածից հետևում է, որ պետք է ծայրաստիճան ուշադիր լինել Մատյանում բանաստեղծի գործածած յուրաքանչյուր բառի, արտահայտության և ընդհանրապես խոսքի հանդեպ, այլապես անխուսափելի են կոպիտ սխալներն ու մեղանչումները:

Նարեկացու բառաստեղծական արվեստի հարցերին նվիրված հոդվածներից մեկում գրել եմ, որ «Նարեկացուն ճիշտ հասկանալու համար նախ և առաջ պետք է ուսումնասիրել նրա բառաշխարհն ու դրա ստեղծման արվեստը»<sup>6</sup>: Քանի որ գործաբանական լեզվաբանների իրավացի կարծիքով, «իրեն անձանոթ ժամանակաշրջանում գրված ստեղծագործություն կարդալիս ընթերցող/մեկնաբանողը կարդացածը լիարժեք հասկանալու համար ստիպված է իրեն անհրաժեշտ գիտելիքը լրացնել տեքստից՝ կառչելով տվյալ **տեքստի բառերից, հեղինակի սուբյեկտիվ կամ օբյեկտիվ ձևակերպումներից**»<sup>7</sup>, ուստի սույն հոդվածում ցանկանում եմ ուշադրություն դարձնել Մատյանում միայն **բեկ** արմատով կազմված բառերի գործածությանը: Ճիշտ է՝ ժամանակի հոլովությունում դրանք բովանդակությամբ ընդլայնվել ու հարստացել են, բայց իմաստով հիմնականում մնացել են նույնը:

Որովհետև ըստ քանակի բանաստեղծն ամենից շատ գործածել է (յոթ անգամ) **բեկեմ** կամ **բեկանեմ** բառի **բեկեալ** ձևը, ուստի սկսենք հենց դրանից: Հայկազյան լեզվի նոր բառգրքում **բեկեմ** բառի համար հղում է արվում **բեկանեմ** բառին, իսկ վերջինիս համար, ի թիվս այլևայլ բացատրությունների, նշվում է՝ «Կոտրել կամ կտրել. մասնատել զամբողջ ինչ ի մասունս», նաև՝ «Խորտակել, փշրել, մանրել», «Պատառել, զիշատել» և այլն<sup>8</sup>: Ստ. Մալխասյանցի բառարանում բեկյալ բառաձևի համար կարդում ենք. «Բեկեալ. ած. կոտրված: Բեկեալ անօթ»<sup>9</sup>, ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական քառահատոր բառարանում՝ «Բեկյալ, ա. մ. (հնց.) 1. Կոտրված, բեկված: Կոր գիծը կարելի է դիտել

<sup>5</sup> Թադևոս Տոնոյան, նշվ. աշխ., էջ 67:

<sup>6</sup> **Հ. Ղ. Միրզոյան**, Նարեկացու բառաշխարհը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2005, № 1, էջ 86: Ի դեպ՝ հոդվածն արժանացել է վաստակաշատ նարեկացիագետ, ցավոք, այժմ արդեն երջանկահիշատակ Հրայրա Թամրազյանի դրվատանքին (տե՛ս **Հրայրա Թամրազյան**, Անանիա Նարեկացու «Ներբողեան ասացեալ ի սուրբն կաթողիկէ եկեղեցի» երկը, «Մատենագիրք հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 604, **նույնի** Գրիգոր Նարեկացին և նարեկյան դպրոցը, գիրք Բ, Եր., 2016, էջ 288-294):

<sup>7</sup> **Շուշանիկ Պարոնյան**, Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Եր., 2011, էջ 51:

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս **Հ. Գաբրիել Աւետիքեան, Հ. Խաչատուր Միրմեղեան, Հ. Մկրտիչ Աւգերեան**, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատոր առաջին, Եր., 1979, էջ 479:

<sup>9</sup> **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հատոր առաջին, Եր., 2010, էջ 358:

իբրև մի բեկյալ գիծ՝ բաղկացած չափազանց մեծ թվով շատ մանր մասերից (դասագիրք): 2. Միտը կոտրված, վշտացած: Եւ բեկյալ կոնիտեի արտասունքներուն կոպերեն ծագիլը (SQ)<sup>10</sup>, իսկ Էդ. Աղայանի բառարանում՝ «Բեկյալ, 1. ած. բեկված: 2. (մաթ.): Ուղիղ գծի անկյուն կազմող հատվածներից բաղկացած գիծ, բեկված գիծ»<sup>11</sup>: Այս բացատրություններից ակնհայտորեն հետևում է, որ **բեկյալ** նախ և առաջ նշանակում է կոտրված, իսկ կոտրված կարող է լինել ինչպես մարմնական-նյութական-առարկայականը, այնպես էլ՝ հոգևորը, այդ թվում և՝ մարդու հասարակական, քաղաքական, գիտամշակութային և համանման մյուս գործունեությունները, այսինքն՝ այն ամենը, ինչը կարող է պատկերվել ուղիղ գծի տեսքով կամ պարզապես ունենալ վերասլացի միտում:

Այժմ տեսնենք, թե բանաստեղծը ինչ իմաստով ու ինչ համատեքստում է գործածում այդ բառաձևը.

1. Մատյանի ԺԷ գլխում, դիմելով Աստծուն «Մի՛» արգելականով սկսվող խնդրանքներով, ասում է.

տող 14- Մի՛ **խորտակեր զբեկեալս,**

տող 20- Մի՛ **ջախջախեր զբեկեալս:**

Նարեկացու պարագայում խիստ արտասովոր համարելով բառիս այսքան մոտիկ գործածությունը՝ քննական բնագրի աշխատասիրողները հարկ են տեսել ծանոթագրելու. «Կրկնության այսպիսի դեպքերը հարիր չեն Նարեկացու ոճին: Թվում է՝ այստեղ կա ձեռագրական վրիպակ, որի հետևանքով նույնացել են տարբեր բառեր: Հակառակ դեպքում, պետք է ընդունել, որ Նարեկացին այդ բառերն օգտագործել է իմաստային տարբեր երանգավորմամբ: Մի դեպքում, թերևս, խոսքը հոգու խորտակվածության, սրտաբեկ լինելու, հուսալքության մասին է, մյուս դեպքում՝ մարմնի ջախջախվածության, մարմնապես փշուրփշուր լինելու մասին»<sup>12</sup>: Միանգամայն իրավացի են աշխատասիրողները, որ Նարեկացին տվյալ դեպքում **բեկեալ** բառը գործածել է «իմաստային տարբեր երանգավորմամբ», բայց պարտադիր չէ, որ դա վերաբերի իրարից տարբեր՝ հոգևոր ու մարմնական ոլորտների, քանզի Նարեկացին, որ, Ա. Ղազինյանի իրավացի գնահատմամբ, հայոց լեզվի ամենաշոթայլ սերմնացանն ու անգերազանցելի բարձրարվեստ ճարտարապետն է<sup>13</sup>, կարող էր նույն բառը «տարբեր երանգավորմամբ» գործածել ոչ միայն տարբեր, այլև նույն ոլորտի (հոգևոր թե մարմնական) համար, բայց համեմատաբար մեղմ և սաստիկ իմաստով: Չէ՞ որ էական տարբերություն կա բեկյալին խորտակելու և ջախջախելու միջև, որովհետև բեկվածն արդեն ինչ-որ իմաստով նշանակում է խորտակված,

<sup>10</sup> «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատոր առաջին, Եր., 1969, էջ 310:

<sup>11</sup> **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 185:

<sup>12</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատենանոթերգութեան, էջ 1003:

<sup>13</sup> Տե՛ս **Արշալոյս Ղազինեան**, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 241:

մինչդեռ ամեն բեկված դեռ ջախջախված չէ: Ավելին, բեկված-խորտակվածը կարող է նորից ուղղվել ու գորանալ, իսկ բեկված-ջախջախվածը, այսինքն՝ փշրված-կոտրվածը հազիվ թե կարողանա երբևէ վերականգնվել ու կազդուրվել: Իսկ ո՞ւմ հայտնի չէ, որ էական տարբերություն կա հակառակորդի (ռազմական, քաղաքական, սպորտային, գիտական ևն) դեմ ուժերի նվազագույն առավելությամբ և ջախջախիչ հաղթանակների միջև, քանզի առաջինը կարճ ժամանակ հետո կարող է վերածվել պարտության, մինչդեռ երկրորդ դեպքում՝ պարտվողի ուշքի գալու համար պահանջվում է շատ երկար ժամանակ, ահռելի ճիգ ու ջանք: Բոլոր դեպքերում, քանի որ տվյալ հատվածում բանաստեղծի հիմնական խնդրանքն է Աստծուց՝ չսաստկացնել առանց այն էլ ծանր իր վիճակը, ուստի բեկյալ բառի կրկնակի գործածությունը միանգամայն բխում է հատվածի բովանդակությունից, հետևաբար զարմանալու ոչ մի հիմք չկա, որ, հակառակ իր սովորության, բանաստեղծը նույն բառը նույն ենթազլխում գործածել է երկու անգամ: Իմ կարծիքով, ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ բանաստեղծը, բացի իր հոգեկան ու ֆիզիկական ծանր վիճակներից, ակնարկում է նաև իր հասարակական դիրքի ու վիճակի մասին, երբ խնդրում է՝ «Մի՛ դատապարտեր զպատժեալս», «Մի՛ մերժեր զհեռացեալս», «Մի՛ տարագրեր զհալածեալս»: Համենայն դեպս, սրանք հարցեր են, որոնք լուրջ խորհելու տեղիք են տալիս:

2. Որ բանաստեղծը իսկապես նկատի ուներ հենց իր կարգավիճակում կատարված ինչ-որ բեկումնային իրադարձություն, լավագույնս երևում է Մատյանի 20-րդ գլխի յոթերորդ ենթագլխից (հաշվի առնելով տվյալ հատվածի խիստ կարևորությունը՝ հարկ եմ համարում բերել ամբողջությամբ).

Իսկ արդ, զի **ի նախնի շնորհին համարձակութենէ դարձեալ՝**

**Փոխեցայ, գրկեցայ, ելայ, հեռացայ,**

**Բաժանեցայ եւ անպատուաստելի կտրեցայ,–**

Արդ, **ընկա՛լ զիս, տէր, վերստին կերպարանեալ ի պատկեր հոգւոյ,**

**Չանարժանս կենաց՝ իբր զմահապարտ, իբր զչարագործ,**

Իբր զպատկառեալ, **իբր զկռիսան եղեալ բանսարկուին,**

Որպէս զանբժշկելի մատնեցեալ, **որպէս զհասեալ յատակս մահու,**

Որպէս զգարշեցեալ, որպէս **զխոտան գտեալ քո կոչմանդ,**

Որպէս **միանգամայն ի կորուստ վարեալ,**

Որպէս դեգերեալ, **որպէս վանեցեալ,** որպէս սարտուցեալ,

Որպէս տարակուսեալ, որպէս **թշուառացեալ,** որպէս **վհատեալ,**

Որպէս **կործանեալ,** որպէս **խորտակեալ,** որպէս **բեկեալ,**

Որպէս թախծեալ, որպէս յոգի տրտմեցեալ, որպէս **թշնամանեալ:**

Բերված հատվածում շատ կարևոր է ճիշտ հասկանալ հենց առաջին տողը և հատկապես «**դարձեալ**» բառը: Բարեբախտաբար բոլոր թարգմանիչները հասկացել են գրեթե նույն ձևով, այսինքն՝ բանաս-

տեղծն ասում է, որ քանզի նախկին շնորհի համարձակությունից զրկվեցի կամ այն կորցրի, ուստի՝

**Փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ,  
Բաժանեցայ եւ անպատուաստելի կտրեցայ:**

Քանի որ այս ամենը տեղի էր ունեցել ոչ հեռավոր անցյալում, որի համար բանաստեղծը խորապես ցավում է, ուստի Տիրոջից խնդրում է իրեն ընկալել, այսինքն՝ ներել և ընդունել որպես «վերստին կերպարանեալ ի պատկեր հոգւոյ», այսինքն՝ որպես նախկին շնորհի համարձակությունը վերագտած, որը կորցնելը շատ թանկ էր արժեցել, քանզի հասել էր մինչև «յատակս մահու»՝ ունենալով շատ ծանր զգացումներ: Ոչ պակաս ուշագրավ է այն փաստը, որ բանաստեղծը Տիրոջից խնդրում է նաև իրեն ընդունել «Որպէս **կործանեալ**, որպէս **խորտակեալ**, որպէս **բեկեալ**»:

Ինչպես տեսանք վերը, Բան ԺԷ-ի տող 14-ում Տիրոջից խնդրում էր՝ «Մի՛ խորտակեր **զբեկեալս**», իսկ այստեղ արդեն խնդրում է իրեն ընդունել որպես կործանված, խորտակված, բեկված: Իրավամբ հարց է ծագում. իսկ ի՞նչն է պատճառը, ինչո՞ւ է բանաստեղծն իր վիճակը ներկայացնում այդքան մռայլ գույներով: Պատասխանը գտնելու համար երկար որոնումների կարիք չկա, քանզի Բան ԺԶ-ի տող 28-ում իրեն համարում է «**Վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանսարկուին նետից**», իսկ ինչպես տեսանք 20-րդ գլխից վերը բերված հատվածում, խնդրում էր իրեն ընկալել «**իբր զկոխան եղեալ բանսարկուին**»: Պարզից էլ պարզ է, որ բանսարկուի արձակած սլաքներից (նետերից) **խոցված վիրավոր** և **բանսարկուին կոխան դարձած** արտահայտությունները, լինելով նույնարժեք, միանշանակ հուշում են, որ բանաստեղծը ինչ-ինչ պատճառով զոհ է դարձել բանսարկությունների, որոնց հետևանքով բեկվել է նրա կյանքը, որը Նարեկացու նման սրբանվեր հոգևորականի համար հավասարազոր էր կործանման կամ «**միանգամայն ի կորուստ վարեալ**»-ի, որի համար ահավոր ցավ զգալով՝ այս նույն գլխի (20) վերջում Տիրոջից խնդրում է իրեն ընդունել «Որպէս **զոջացեալ**, որպէս **խոստովանեալ**, // Որպէս **ի յոտս քո դիմեցեալ**, որպէս **զապաշխարեալ**»:

Ու քանի որ բանաստեղծը, ինչպես տեսանք, իրեն համարում է բանսարկությունների զոհ, որ նշանակում է չարած ու չգործած արարքների համար պատժված, այնուամենայնիվ հույսը դնելով Աստծու արդարամտության վրա, քանզի Նա՝ որպէս ամենատես, տեսնում, չափում, կշռում ու վճռում է մարդկանց ոչ միայն գործածների, այլև «ոչ գործեցելոց»-ի (տ. 112) հիման վրա, ուստի միանգամայն վստահ է, որ Նա անպայման կարդարացնի իրեն:

3. Մատյանի ԻԶ բանի Բ ենթազլխում նորից ամենամռայլ գույներով ներկայացնելով իր հոգեկան ծանր վիճակը՝ բանաստեղծը գրում է.

Այլ **բեկեալ սրտիւ**, մատանց տատանմամբ, յոյս առեալ դարձի,  
Զդէմս ի յերկիր եղեալ, պաղատիմ մաւրդ Յիսուսի:

Եթե վերը, ինչպես տեսանք, բանաստեղծն ասում էր, որ «Փոխեցայ, գրկեցայ, էլայ, հեռացայ, / Բաժանեցայ եւ անպատուաստելի կտրեցայ», ապա այստեղ արդեն նշում էր՝ բեկված սրտով «յոյս առեալ դարձի», այսինքն՝ վերադարձի հույս ունենալով՝ դիմում է Աստվածամորը, որպեսզի նրա միջնորդությամբ Աստված ների իրեն, հասկանալի է՝ ոչ թե իրական մեղքերի, այլ բանասարկության հետևանքով իրեն վերագրված «ոչ գործեցելոց» արարքների համար:

4. Հինգերորդ անգամ «բեկյալ» բառը բանաստեղծը գործածում է Մատյանի Լ բանում, որտեղ, նկատի ունենալով ընդհանրապես մեղավոր մարդուն, ասում է, որ այդ տեսակը սովորաբար համարձակվում է իր համար խնդրել ոչ թե արքայություն,

Այլ գտանջանացն թեթեւութիւն,

Ո՛չ ընդ կենդանեացն ի լոյս,

Քան թէ ընդ գերեզմանականացն զգայական շնչովն՝ ի խաւար,

Ո՛չ ընդ ամբարձեալսն, **այլ ընդ բեկեալսն եւ ընդ խորտակեալսն:**

Առերևույթ թվում է, թե բանաստեղծն այս դեպքում նկատի ունի ոչ թե իրեն, այլ ընդհանրապես մեղավոր մարդուն, բայց եթե հիշենք, որ Ի բանի տ. 102-ում խնդրում էր իրեն ընդունել «Որպես կործանեալ, որպես խորտակեալ, որպես բեկեալ», ապա դժվար չէ համոզվել, որ այս դեպքում ևս «**ընդ բեկեալսն եւ ընդ խորտակեալսն**» ասելով՝ առաջին հերթին նկատի ունի հենց իրեն, քանզի սա պարզապես նարեկացիական սովորական հնարք է՝ խոսել իր մասին՝ առանց դիմային որոշակիացման:

5. Նախավերջին անգամ «բեկյալ» բառը գործածում է Մատյանի ԿԳ գլխում, որտեղ, ամենատարբեր ձևերով գովաբանելով Աստծու ամենագոր կարողությունն ու աներևակայելի մարդասիրությունը, խնդրում է.

Դարձո՛ գամբարշտեալս ի պաշտաւն բարի երկիրդի,

Զթմբբեալս՝ ի զգաստութիւն արթնութեան սրտի,

Զանմաքուրս՝ ի սրբութիւն պայծառութեան կերպարանի,

Զբազմաբիծս՝ յանբծութիւն հանդարտական սուրբ պատկերի,

**Զբեկեալս՝ յողջութիւն, որ ի դիպմանց ոչ խորտակի,**

Զլացեալս՝ ի խնդութիւն զուարթութեան **անտխրելի,**

Զյուսահատեալս՝ ի սէր միաւորիչ **անքակտելի,**

Զամաչեցեալս՝ ի վստահութիւն հաստատութեան **անշարժելի,**

Զխաւարեալս՝ ի լոյս երանութեան **անմեկնելի,**

Զմահու գերեալս՝ ի կեանս, որ ընդ եղծմամբ **ոչ անկանի,**

Զի փառաւորեցի անուն քո, Յիսուս...

Թեև բերված հատվածի յուրաքանչյուր տողում զգացվում է կորստի, զրկվածության ցավ ու ափսոսանք, բայց նաև՝ կորցրածն ավելի զորացած ու ամրապնդված վերագտնելու բուռն ցանկություն, հույս ու երազանք, այդուհանդերձ ամենակարևորը, թվում է, «**Զբեկեալս՝ յողջութիւն, որ ի դիպմանց ոչ խորտակի**» տողն է, որով բանաստեղծը նախ

նորից ասում է, որ ինքը բեկված, կոտրված է, իսկ այնուհետև ցանկանում է այնպիսի ողջություն, որը «**ի դիպմանց ոչ խորտակի**»: Իր այս ցանկությամբ բանաստեղծը միաժամանակ լռելյայն հասկացնում է, որ իր հետ արդեն պատահել է այնպիսի դեպք, միջադեպ կամ պատահար (հիշենք, որ ԺԶ գլխում (տ. 28) իրեն համարում էր «**Վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանասարկուին նետից**», իսկ 20-րդ գլխում՝ «**զկոխան եղեալ բանասարկուին**»), որից բեկվել էր իր կյանքը, ուստի Աստուծոց խնդրում է այնպիսի ողջություն, որը նման պատահարներից այլևս չի բեկվի ու խորտակվի: Դիտելի է, որ հաջորդ տողերում ևս ցանկանում է, որ Աստուծոց իր խնդրած զվարթության խնդությունը լինի «**անտխրելի**», միավորիչ սերը՝ «**անքակտելի**», երանության լույսը՝ «**անմեկնելի**», իսկ կյանքը՝ «**որ ընդ եղծմամբ ոչ անկանի**», որով նորից փաստում է, որ, ցավոք, իր կյանքը եղծվել, բեկվել ու խորտակվել է:

6. Վերջին յոթերորդ անգամ «բեկյալ» բառը բանաստեղծը գործածել է Մատյանի ԿԶ գլխում, որտեղ, ի թիվս այլևայլ խնդրանքների, Աստուծուն ասում է.

Մեռեալ պատկերիս մի՛ ողիս պահեսցես,

Ընդ անշունչ կերպարանիս մի՛ ի դատ քննութեան մտցես,

Մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես,

Ընդ բեկեալ խեցեղէն անաւթոյս մի՛ ուժգնութեամբ մարտիցես:

Իրեն համարելով մեռած պատկեր՝ բանաստեղծն Աստուծոց խնդրում է իր հանդեպ ողի չպահել, իր անշունչ կերպարանքի (պատկերի) հետ դատաքննության մեջ չմտնել, մահու տանջվածին նոր հարված չհավելել, ասել է թե՛ նախկինում արդեն ստացել է մահատանջ հարվածներ, ուստի չի ցանկանում նորերն ստանալ:

Վերջապես, որպես արդեն բեկված, կոտրված, փշրված խեցեղէն անոթ, իմաստ չի տեսնում, որ Աստված իր հետ ուժգնությամբ մարտնչի, ուստի հարկ է համարում ասելու նաև.

**Ջայսքանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս**

**Մի՛ վերստին յանդիմանեսցես:**

Խոստովանելով, որ նախկինում ինքը բազմիցս ու ամենատարբեր ձևերով կշտամբվել ու հանդիմանվել է (բնականաբար մարդկանց կողմից, որից բեկվել ու խորտակվել է իր կյանքը), ըստ այդմ՝ Աստուծոց խնդրում է, որ այդքանից հետո նա ևս նորից, կրկին, դարձյալ, վերստին չհանդիմանի իրեն:

Հետաքրքիր է, որ բանաստեղծի անձի բեկվածության, կոտրվածության, փշրվածության ու կյանքի եղծվածության թեման այսքանով չի ավարտվում Մատյանում, այլ հնչում է նաև **բեկ** արմատով կազմված նորանոր բառաձևերով: Օրինակ՝ Բան Ը-ում, խոսքն ուղղելով իր մեղավոր անձին (փաստորեն, բանաստեղծը զրուցում է ոչ միայն Աստուծու, այլև ինքն իր հետ, ուստի Մատյանում ունենք զրույց և ինքնա-



գրույց), հեղինակը, ի թիվս ինքնադարձիչ այլևայլ խոսքերի, որոշակիորեն գրում է.

Եւ քանզի կառուցեր քեզ անել արգելան եւ անփախչելի որոգայթ՝  
Խոստովանեալդ քեզէն զանթշկականդ քո վեր

Եւ զանարինակդ քո հարուած,

Վկայելով զանձինդ պարտական մահու զանբուժելիդ բեկութիւն...

Շարունակելով այս նույն ոգով հավելել նորանոր ինքնակշտամբանքներ ու հանդիմանանքներ՝ գլխի վերջում իր անձի մասին փաստում է.

Ո՛վ տնանկդ ի բարձրութեանց

Եւ ի հոգեւոր հարստութեանց

Եւ հատուածեալդ յարինելոց:

Ըստ էության բանաստեղծը միանշանակ խոստովանում է, որ իր համար կառուցել է անելանելի արգելարան, որ իր ստացած հարվածն անօրինակ, իսկ վերքն անբուժելի է, և որ հենց այդ օրինակը չունեցող հարվածի հետևանքով էլ դարձել է **տնանկ**, այսինքն՝ բարձունքից գլորվել է ցած, ուստի զրկվել է նաև հոգևոր հարստությունից, քանզի կտրվել, հատվածացել, բաժանվել է օրհնվածներից կամ, որ նույնն է, հոգևոր դասից: Համոզվելու համար, որ մեր այս հետևությունը պարզապես բանաստեղծի գեղարվեստական խոսքի նույնական վերարտադրությունն է, բավական է ասել, որ բառս Հայկազյան լեզվի նոր բառգրքում բացատրված է. «**Անկեալն ի մեծութենէ տան կամ նախնեաց մեծատանց**. տառապեալ աղբատ. ջրաւոր. կարօտեալ. ցականեալ»<sup>14</sup>:

Գրեթէ նույնն ենք կարդում նաև աշխարհաբար հայերենի բացատրական բառարաններում: Օրինակ՝ Էդ. Աղայանը գրում է. «Տնանկ, գ. ած. 1. Տուն չունեցող, **տնից-տեղից ընկած, տուն ու տեղ չունեցող, անտուն, անտեր**: Աղբատ, ոչինչ չունեցող»<sup>15</sup>:

Եթե նկատի ունենանք, որ բացի վերը բերված ինքնաբնութագրական տողերից՝ այդ նույն ենթագլխում բանաստեղծն իր մասին ասում է նաև՝ «**Ո՛վ կապտեալդ ի պճնելոց**», «**Ո՛վ նուաստագոյնդ ի վեհից**» և համանման այլ մտքեր, ապա, կարծում եմ, դժվար չէ համոզվել, որ բանաստեղծը ներկա դեպքում հիշում և ընթերցողին հուշում է մինչ այդ իր կյանքում տեղի ունեցած ճակատագրական ինչ-որ իրադարձության մասին, որից բեկվել է իր կյանքը, ուստի դարձել է տնանկ ու պճնվածներից կապտյալ՝ կտրված:

2. Երկրորդ անգամ **բեկութիւն** բառաձևը գործածված է Մատյանի ԺԱ բանում, բայց քանի որ այդտեղ խոսվում է ընդհանրապես հավատացյալի խոնարհության մասին, հարկ չեմ համարում ծանրանալ դրա վրա:

<sup>14</sup> «Նոր բառագիրք հայկազեան լեզուի», հատ. երկրորդ, Եր., 1981, էջ 883:

<sup>15</sup> Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 1449:

3. Մասոյանի ԿԶ գլխում շոշափելով ընթերցողների համար իր ստեղծագործության ունենալիք նշանակության հարցը՝ բանաստեղծն ասում է, որ այն ճիշտ հասկանալու և ըստ այդմ՝ ճիշտ գործելու դեպքում կարող է օգտակար լինել թե՛ մաքուրին (անմեղին) և թե՛ պատժապարտին. առաջինին՝ «Առ ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրութենէ», երկրորդին՝ «ատիթ ազատութեան, // Որով ամբարձեալ ի կործանմանէ // Հոգեւորական մահուն՝ ապրեսցի՛ յուսով», իսկ իր համար այն կլինի.

Արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծանելի,  
Որ փոխանակ իմոյ եղկելոյս անձին մահացոյի՝  
Անդադար հնչմամբ հեծութեան լալոյ  
Առանց լռելոյ միշտ աղաղակէ:

Ահա այս ամենից հետո բանաստեղծը Հիսուսից խնդրում է.  
Ողորմեա՛, խնայեա՛, մարդասիրեա՛,  
Նայեա՛ ի վտանգս, **ակնարկեա՛ ի բեկութիւնս:**

Վերը արդեն տեսանք, որ այս գլխում գործածված է նաև «բեկյալ» բառը: Ըստ այդմ՝ կարող ենք փաստել, որ եթե ԺԷ գլխում «բեկյալ» բառը գործածել է երկու անգամ, ապա այս գլխում (ԿԶ) միաժամանակ գործածված են «բեկեալ» և «բեկութիւն» բառերը:

4. «**Բեկութիւն**» բառը հաջորդ անգամ գործածված է Բան ԶԸ-ում, որտեղ հենց սկզբից կարդում ենք.

Եվ արդ, ջուր կամաց եւ կաթ արտասուաց  
**Բեկութեամբ հոգւոյս, մտացս լքմամբ,**  
**Խորտակմամբ սրտիս** հեղեալ առաջի՝  
Զմարգարէին յիշեցուցանեմ՝ զարիմաթացւոյն Սամուէլի...

Հիշեցնելով Աստվածաշնչի Ա թագաւորաց գրքում (Է, 5-6) նկարագրված Մասափեթում իսրայելացիներին արիմաթացի Սամուէլի դատելու օրինակը՝ բանաստեղծն իր վիճակը ներկայացնում է որպէս **հոգու բեկվածություն, մտքի լքվածություն ու սրտի խորտակվածություն**, հոգեկան ավելի ծանր վիճակ դժվար է պատկերացնել, առավել ևս՝ այսքան սեղմ, բայց և անչափ պատկերավոր բնութագրմամբ:

5. Վերջին անգամ «բեկութիւն» բառը գործածված ենք տեսնում ՂԱ գլխում, որտեղ, նկարագրելով ու զովաբանելով Աստծու ամենագործությունն ու ամենակարողությունը, ի թիվս այլևայլ խնդրանքների, հավելում է.

Հանգո՛՛ զվաստակեալս ի բազմածուփս աշխատութենէ,  
Բա՛րձ գտագնապ տարակուսանաց **ոգւոյս կործանման,**  
Զհառնութիւնն ընդ վշտացն,  
Զհեծութիւնն ընդ կարեացն,  
Զանձկութիւնն ընդ թշուառութեանցն,  
Զհառաչմունսն **ընդ խորտակմանցն,**  
**Զբեկութիւնսն** ընդ ապշութեանցն,  
Զթմբրութիւնսն ընդ շրտմանցն,

Զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն,  
Զթերամտութիւնն ընդ խելագարութեանցն,  
Զսառումն սիրոյն եւ զհրային ջերմութիւն աղուական ախտին:

Ի դէպ՝ Թ. Գուշակյանը, Գ. Տրապիզոնին և Մ. Խերանյանը «գրեկութիւնսն» բառը աշխարհաբար թարգմանել են «արտաբեկություն», Մ. Գոչունյանը՝ «թուլութիւններ», Վ. Գևորգյանը՝ «վիատություն», իսկ ռուսերէն տողացի թարգմանիչները՝ «сокрушенность сердца», որոնք այնքան էլ համարժեք չեն բնագրին:

Բանաստեղծը Մատյանում գործածում է **բեկ** արմատով կազմված այլ բառեր ևս: Օրինակ՝ Բան ԻԵ-ում արտակարգ պատկերավորությամբ նկարագրելով կյանքի ծովում իր նավ-տապանակի խորտակման զգայացունց տեսարանը՝ տող 36-ում ասում է. «Ողնափայտին պատսպարան իսկոյն **բեկաւ**»: Որ ասվածը վերաբերում է հենց իրեն, երևում է ոչ միայն տող 15-ի այն պնդումից, որ եթե որևէ մեկը փորձի **«առ իմս հոգեւորական խորտակումն գուգաձայնել ոչ է սխալական»**, այլև տող 45-ից՝ **«Արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ**»:

Քանի որ հեղինակի խոստովանությամբ՝ նավի խորտակման նկարագրությամբ պատկերված է հենց իր **«հոգեւորական խորտակումն»**, ուստի նույն գլխի Դ ենթագլխում, երագելով իր խորտակված նավ-տապանակի վերականգնման մասին, արտահայտում է ինքնակենսագրական ուշագրավ տեղեկություններ, որոնցից տեղի սղության պատճառով հարկ էմ համարում բերել միայն հետևյալները.

տ. 64- Իցե՞ արդէք տեսանել **զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ վերստին կցեալ**,

տ. 66- Արդ, իցե՞ ակն ունել նայել գյաւէտ **խաթարեալ կերպարան բնութեանս կրկին հանդերձեալ**,

տ. 67- Իցե՞ արդէք թէ տեսից **զքակտեալ տաղաւար թշուառացելումս միւս անգամ կանգնեցեալ**,

տ. 69- Ապաքէն գուցե՞ ակն ունել **զանկեալս ի շնորհեղ լուսոյ դարձեալ կազդուրեալ**,

տ. 76- Արդէք մտի՞ց ի **խրախճանութիւն խորանին լուսոյ՝ քեւ առաջնորդեալ**,

տ. 79- Իցե՞ թէ յաւելից հայել ի **տաճար սուրբ քո, աղաղական մարգարէին**,

տ. 84- Եթէ իցե՞ երբէք նկատել **զգագանաբեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գթութեան քո հաւտ**:

Ամբողջ ենթագլխից վերցրել ենք միայն այն տողերը, որոնցում արտահայտված է մի կողմից բաժանման, խաթարման, քակտման, անկման ակնհայտ ցավ ու աստուսանք, իսկ մյուս կողմից՝ **վերստին, կրկին, միւս անգամ, դարձեալ, նորից** վերականգնվելու, միանալու՝ **կցեալ, հանդերձեալ, կանգնեցեալ, կազդուրեալ, առաջնորդեալ** հույսի փայփայում: Կարծում եմ՝ այս ամենը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ Մատյանը գրելուց առաջ և Ա-ՂԱ, ՂԴ և ՂԵ գլուխները գրելիս բանաստեղծը **ինչ-որ բանասարկության հետևանքով եղել է պատժված ու շատ բաներից զրկված**, ուստի, իրեն անվանելով «զգագանաբեկ հերքելի ոչխարս», ե-

րագում ու Տիրոջից խնդրում է վերադառնալ «վերստին կամաց գթութեան քո հաւտ»: Ինչպէս տեսանք, այս գլխում ևս երկու անգամ գործածում է **բեկ** արմատով կազմված բառեր՝ **բեկաւ** և **գազանաբեկ**: Իսկ գազանաբեկ բառը, ըստ Հայկազյան լեզվի նոր բառգրքի, նշանակում է. «Ի գազանէ բեկեալ, պատառեալ, գիշատեալ, խածեալ»: Հիշենք նաև, որ Մատյանի ԺԵ բանում, նկատի ունենալով Ղուկասի ավետարանի «Կորած ոչխարի եւ կորած դրամի առակը», բանաստեղծը գրել էր.

**Իսկ կրկին առակն, որ առ իս,**

**Որ ոչխարին տրուայն տարացուցի,**

Որ յետին անգալայութեանն էր մատնեցեալ, մոլորեալ,

Եւ ի լերինն, ուր ոչ է այցելութիւն,

**Ընդ գազանականացն** դիւաց եւ կոռցն վայրենութեան թափառեալ,

Ո՛չ մերձաւոր գոլ սակաւ մի հաւտին:

Ո՛չ բան ունէի, որով եւ զցաւոցն աղէտ պատմէի,

Ո՛չ ձեռն ձգողական, որ համերցն է ազդողական:

Փաստորեն, իրեն նմանեցնելով հոտից բաժանված, սարերում «**ընդ գազանականացն դիւաց եւ կոռցն**» թափառող կամ «**գազանաբեկ հերքելի**» **ոչխարի**, ըստ էության նկատի ունի նույն վիճակը՝ հոտից կտրված, բաժանված կամ բեկված կացություն, որից ազատվելու, դուրս գալու համար երագում է երբևէ իրեն տեսնել «**վերստին կամաց գթութեան քո հաւտ**», այսինքն՝ Տիրոջ հոտը վերադարձած:

Ոչ պակաս կարևոր է նաև վերը բերված «Իցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո, աղաղական մարգարէին» տողը, որտեղ հիշեցնելով Հովնան մարգարէին, որը Տիրոջ խոսքը չկատարելու համար Տիրոջ իսկ հրամանով «Երեք ցերեկ և երեք գիշեր» մնաց կետի փորում, որտեղ անընդհատ աղոթում էր Տիրոջը՝ ասելով՝ «արդեօք նորից պիտի տեսնեմ քո սուրբ տաճարը»: Հարկ կա՞ ասելու, որ Հովնանի երեք ցերեկ և երեք գիշեր կետի փորում անցկացրած ժամանակը խորհրդանշում է Մատյանը գրելիս բանաստեղծի ունեցած կացությունը, այսինքն՝ լուսից զրկված ու խավարյալ վիճակ, որից ազատվելու համար կրկնում է մարգարէի աղոթքը՝ «Իցէ՞ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քո»:

«**Բեկ**» արմատով բառ է գործածված նաև ԼԷ գլխում, որտեղ նորից նկարագրելով իր հոգեկան ծանր վիճակը, հույսը դնելով Աստծու վրա՝ ասում է.

Ապաւինիմ եւ արդ անձամբ **բեկելով**

Ի յոյսդ հաստատութեան կենդանի, անեղծ:

Բերված երկտողի «անձամբ բեկելով» բառակապակցությունը գրեթե բոլոր թարգմանիչները հասկացել ու վերարտադրել են որպես «կոտրված սրտով», «սրտաբեկ հոգիով» կամ պարզապես «սրտաբեկ»: Բոլոր դեպքերում նորից գործ ունենք բեկված, կոտրվածի հետ, անկախ այն բանից, թե բանաստեղծը ինչ է նկատի ունեցել՝ սրտի՞, թե՞ հոգու բեկվածությունը:

**Բեկ** արմատով կազմված մեկ բառ էլ բանաստեղծը գործածում է ԿԸ գլխում, որի հենց սկզբում, հիշեցնելով նախորդ գլուխներում շարադրվածի ահավորությունը, գրում է.

Եւ արդ, ի յիշատակ **ահարկութեան վերագրեցելոցդ,**  
Որք յաստուածուստ են սպառնալիք՝ **ինձ ժամանեցալք,**  
Զիա ըդ դադարեցայց ի նորոգ ողբերգութեանց,  
Եւ կամ ո՞ր պէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս:

Այնուհետև հիշելով Երեմիա մարգարեի խոսքը (Երեմ. Թ. 1)՝ ասում է, որ եթե նույնիսկ նրա ըղձանքն ավելիով իրականանա, մինևնույնն է, «**Զբեկման ոգուցս** չափել զվտանգ ոչ ձեռնարկեցեն»(տ. 14):

Այս դեպքում ևս թարգմանիչները, դրսևորելով գրեթե նույնանման ըմբռնում, «**զբեկման ոգուցս**» բառակապակցությունը թարգմանել են հոգու խորտակում, կոտորված սիրտ, կոտորված հոգի, կործանված հոգի, որոնք գրեթե համարժեք են իրար:

Եվ այսպես, ավարտելով Մատյանում **բեկ** արմատով կազմված բառաձևերի գործածության բոլոր օրինակների քննությունը՝ կարող ենք ասել, որ բանաստեղծը 13 գլխում 16 անգամ գործածել է այդ նույն արմատով կազմված վեց բառաձև՝ **բեկեալ, բեկութիւն, բեկելով, բեկման, բեկաւ** և գազանաբեկ: Դրանցից մեկը վերաբերում է ընդհանրապես հավատացյալին, իսկ մնացած 15-ը՝ իրեն՝ հեղինակին: Վերջիններիս մեջ բանաստեղծը պարզորոշ նկարագրում է ինչ-որ բանսարկության հետևանքով ստացած ծանր հարվածից իր բեկված, կոտորված, փշրված, գազանաբեկ վիճակը, որի համար, իհարկե, նախ և առաջ մեղադրում է իրեն, բայց ուղղակի և անուղղակի ձևով մերկացնում ու խստագույնս դատապարտում է նաև մարդկային բնավորության նսեմ գծերը, ըստ այդմ՝ բանսարկության հեղինակներին: Այլապես անհասկանալի է մնում այն իրողությունը, որ բանաստեղծը Մատյանի 8-րդ գլխից մինչև 91-րդը ներառյալ միալար հնչեցնում է իր բեկվածության խնդիրը և դա այն դեպքում, երբ նա չափազանց զգուշավոր է բառագործածության հարցում, քանզի ամեն կերպ ջանում է խուսափել բառակրկնությունից, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հասցնել նվազագույնի: Այստեղ հարկ էմ համարում հիշեցնել նաև տեքստագիտական մի կարևոր սկզբունք. «**Նույն բառակապակցության, նույն դարձվածքի, նույն բառի կրկնությունը տեքստային հոգեբանության արտահայտության նշան է, առավել ևս եթե դրանք կրկնվում են տեքստի բովանդակության նույն տիրույթում**»<sup>16</sup>:

Բարեբախտաբար, մեր եզրակացություն-ընդհանրացումը հաստատում է նաև բանաստեղծը: Քանի որ Մատյանի ԴԲ և ԴԳ գլուխները գրվել են նախորդ 93 գլուխների (Ա-ՂԱ, ԴԴ և ԴԵ) ավարտից առժամանակ անց, երբ Աստված արդեն լսել էր նրա՝ «Ի խորոց սրտից խաւսք ընդ Աստուծոյ»-ում արտահայտած խնդրանքները և շտկել տեղի ունե-

<sup>16</sup> Թադևոս Տոնոյան, նշվ. աշխ., էջ 97:

ցած ահավոր անարդարությունը, ուստի դրանցում զգացվում է նախորդ 93 գլուխների համեմատությամբ միանգամայն հակադիր տրամադրություն՝ կենաց և մահու դժվարին պայքարում տարած փառահեղ հաղթանակի կատարյալ ցնծություն, նաև՝ ոչ հեռավոր անցյալում ունեցած դառնադի զգացումների տհաճ հիշողություն, վերջապես՝ ապագայում բարու հաղթանակն ու իշխանությունը հաստատվելու լուսավոր երազանք: Այդ է պատճառը, որ եթե Բան ԻԵ-ում արձանագրելով «**միջոցաւ մեծաւ**» (այսինքն՝ երկար ժամանակով և ոչ թե մեծ տարածությամբ, ինչպես կարծել են որոշ թարգմանիչներ) իր **բաժանվածության փաստը**, միաժամանակ երագում էր իրեն տեսնել «**վերստին կցեալ**», կա՛մ նորից մտնել «**ի խրախճանութիւն խորանին լուսոյ**» և նայել «**ի տաճար սուրբ քո, աղաղակաւն մարգարէին**», կա՛մ երբևէ տեսնել «**զգագանաբեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գթութեան քո հաւտ**», ապա Բան ՂԲ-ում արդեն գոհունակություն է հայտնում Տիրոջը, որ, կոչնակի ձայնից սթափվելով, այլևս ոտքի է կանգնել՝ «**ի վեր յարուցեալ ի մեռարինակս թմբմանէ**», և հասել «**ի ժամ պաշտաման աւրինաբանութեան՝ յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդէպ հատուցմանս բեմի**»:

Ըստ այդմ՝ փառք է տալիս Աստծուն, որ «այսքանեալք հնարաւորութեամբք ընդ փրկութեան իմում հոգացար» և «**կենդանացուցեր ի դադարմանէ դժոխական անբանութենէ**»: Ավելին, բանաստեղծը հայտնում է, որ Աստված ոչ միայն օգնության է հասել իրեն և ոտքի կանգնեցրել դժոխային անբանությունից, այլև ծանր լուծ է դրել ստամբակի ուսին, ինչպես նաև՝ «**վարապան վանիչ չարախաւսին կգակաց**» (աշխարհաբար «Չարախոսի կգակին զսպող սանձ»<sup>17</sup>) և այլն: Եթե հիշենք, որ ԺԶ գլխում ասում էր, որ վիրավորված է բանասարկուի նետից, Ի գլխում խնդրում էր, որ Աստված իրեն ընկալի «**իբր զկոխան եղեալ բանսարկուին**», իսկ այստեղ արդեն փաստում է, որ Աստված ոչ միայն արդարացրել ու վերականգնել է իրեն նախկին դիրքում, այլև ըստ էության պատժել է չարախոս-բանասարկուին՝ զսպիչ սանձ դնելով նրա կգակին, ապա, կարծում եմ, կարելի է ապացուցված համարել վերը արված հիմնական եզրակացությունը:

Ուշագրավ է, որ թեև Մատյանի ՂԲ և ՂԳ գլուխները (համապատասխանաբար պետք է լինեն ՂԴ և ՂԵ) գրելիս բանաստեղծն արդեն եղել է ներված ու վերականգնված, բայց և այնպես չի կարողացել մոռանալ նախկինում ճաշակած դառնությունը, ուստի ստիպված է եղել վերհիշելու այն՝ գրելով. «**Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ ի նոյն պատկեր յայտնութեան իրի, վասն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն, որ ի գթութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ աւրինեալ: Քանզի մեռայ, որ է դառնութիւն, այսինքն՝ նշանակ իմն յարմա-**

<sup>17</sup> Ս. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմանեց Մկրտիչ Խերանյանը, Եր., Մուղնի, 2003, էջ 559:

րական չարչարաւոր կրից տաժանմանց, որ եւ միւռոն ստուգարանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան ազգականութիւն» (տ. 456-462):

Վերը շարադրվածը, կարծում եմ, լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ նույնիսկ մեկ բառը կամ նույնարմատ մի քանի բառերը կարող են բանալի դառնալ Նարեկացու Մատյանը նորովի ընթերցելու, հասկանալու և մեկնաբանելու համար, իսկ այդպիսի բառերն ու բառախմբերը Մատյանում չափազանց շատ են:

**Բանալի բառեր** – բառ, բեկեմ, բեկյալ, բեկումն, բանասրկու, դառնություն, դժոխսյին անբանություն, նողկություն

**ГРАЧИК МИРЗОЯН – Анализ употребления в «Книге скорбных песнопений» слов с корнем -лом.** – Анализируя использование в «Книге скорбных песнопений» слов, в основе которых лежит корень -բեկ- (-лом-), автор приходит к выводу, что перед тем как приступить к созданию глав 1–91 и 94–95 своего шедевра, Григор Нарекаци стал жертвой некоей интриги, ему нанесли чрезвычайно тяжёлый удар, от которого его жизнь, по существу, *надломилась, разбилась и рухнула*.

Поздней, а точнее – до работы над главами 92 и 93, поэт, к счастью, был оправдан и восстановлен в прежнем статусе. Но муки, пережитые им вследствие полученного удара, были столь нестерпимы, что даже после оправдания он не смог забыть испытанную недавно горечь, ибо в 93-й главе «Книги», которая непременно должна быть 95-й, искренне признаётся Господу: «...мне не забыть омерзения, которое ты величием своим милосердно уластил».

**Ключевые слова:** слово, ломать, ломаный, слом, клеветник, горечь, адская бездейственность, омерзение

**HRACHIK MIRZOYAN – Analysis of the Words with the Root bhreg- (բեկ) in the “Book of Lamentations”.** – Analyzing the use of words with the root բեկ- (bhreg-), in the “Book of Lamentations”, the author of the article comes to the conclusion that before writing the chapters 1-91 and 94-95 of his masterpiece, Grigor Narekatsi had become the victim of some kind of intrigue, had got a very heavy blow which had, in fact, broken, changed and wrecked his life.

Later, to be exact, before writing chapters 92 and 93, the poet, fortunately, was justified and restored to the previous status, but the sorrow he experienced from the heavy blow had been so intolerable that even after justification, he could not forget the recently tested bitterness, for, in chapter 93 of the “Book of Lamentations”, which must necessarily be chapter 95, he sincerely confesses the Lord “... I do not forget the disgust of mine that sweetened from the mercy of Your greatness”.

**Key words:** word, broken, crisis, intriguer, bitterness, hellish idleness, disgust